**ԼԻԶԻՆԳՈՎ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-2**

ք. Երևան «02» դեկտեմբերի 2025 թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Աղամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Լիզինգառու», մի կողմից, <<Կոնցեռն Էներգոմաշ>> ՓԲԸ-ն, ի դեմս Լիազորված անձ Արմինե Գրիշայի Բատիկյանի, որը գործում է 02/12/2025թ տրամադրված լիազորագրի հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, և «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ-ն, ի դեմս Կորպորատիվ Բիզնեսի տնօրեն Արման Պետրոսյանի, որը գործում է 21/03/2025թ թիվ 2163-02 լիազորագրի հիման վրա հիման վրա, այսուհետ «**Գնորդ-Լիզինգատու**» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. **Վաճառողը** պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով **Լիզինգառուին** հանձնել պայմանագրի N 1 հավելվածով՝Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝նաև ապրանք), իսկ **Լիզինգառուն** պարտավորվում է ընդունել պայմանագրին համապատասխանող ապրանքը:

1.2 Սույն պայմանագրի , ինչպես նաև Գնորդ-Լիզինգատուի ու Լիզինգառուի միջև կնքվող լիզինգի պայմանագրի (այսուհետ՝ «Լիզինգի պայմանագիր») համաձայն, Գնորդ-Լիզինգատուն Վաճառողից սեփականության իրավունքով ձեռք է բերում Լիզինգառուի կողմից ընդունված Ապրանքը և վճարի դիմաց, սեփականության իրավունքի փոխանցման հնարավորությամբ, լիզինգով հանձնում է Լիզինգառուի ժամանակավոր օգտագործմանը և Վաճառողին վճարում դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Լիզինգառուն և/կամ Գնորդ-Լիզինգատուն իրավունք ունեն՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում **Վաճառողի** կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և գրավոր պահանջել **Վաճառողից** վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 **Վաճառողի** կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ գրավոր սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել **Վաճառողից** վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 **Վաճառողից** պահանջել հատուցելու վնասները, եթե **Գնորդ-Լիզինգատուն** **Վաճառողի** կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ

անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 **Վաճառողի** կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել **Լիզինգառուի** համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել **Վաճառողին**:

**2.2 Լիզինգառուն պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 **Վաճառողի** հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել **Վաճառողին**:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում վճարել լիզինգի պայմանագրով վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ այդ պայմանագրով նախատեսված տուժանքը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին **Վաճառողին** ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո **Վաճառողին** հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Գնորդ-Լիզինգատուն պարտավոր է՝**

2.3.1 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքը **Լիզինգառուի** կողմից հանձնման-ընդունման արձանագրությունով **Վաճառողից** ընդունելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով **Վաճառողին** վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ **Վաճառողի** գրավոր պահանջով նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Վաճառողն իրավունք ունի՝**

2.4.1 Լիազինգառուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.4.2 **Գնորդ-Լիզինգատու**ից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և **Լիզինգառուի** կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.4.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե **Գնորդ-Լիզինգատուն** էականորեն խախտել է պայմանագիրը:

2.4.3.1 **Գնորդ-Լիզինգատու**ի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս(երկուսից ավել անգամ) խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.4.4 **Լիզինգառուի** և **Գնորդ-Լիզինգատու**ի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.5 Վաճառողը պարտավոր է՝**

2.5.1 **Լիզինգառուին** հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.5.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան **Լիզինգառուի** և/կամ **Գնորդ-Լիզինգատուի** կողմից սահմանված ժամկետներում:

2.5.3 **Լիզինգառուին** հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.5.4 **Լիզինգառուին** հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ **Լիզինգառուի** պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.5.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.5.6 Հետ տանել **Լիզինգառուի** կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝

ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ **Վաճառողին** վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.5.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում և կարգով վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.5.8 **Լիզինգառուին** հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.5.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո թե՛ **Գնորդ-Լիզինգատուին**, թե՛ **Լիզինգառուին** հատուցել վերջիններիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.5.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել թե՛ **Գնորդ-Լիզինգատուին**, թե՛ **Լիզինգառուին** :

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 94 366 116 (իննսունչորս միլիոն երեք հարյուր վաթսունվեց հազար մեկ հարյուր տասնվեց) ՀՀ դրամ, որն իր մեջ ներառում է ապրանքի ձեռքբերման արժեքը՝ 76 760 000 (յոթանասունվեց միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով **Վաճառողի** կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները, ակնկալվող շահույթը, ինչպես նաև լիզինգի սպասարկման գինը և Լիզինգի առարկան սեփականության իրավունքով **Լիզինգառուին** հանձնելու գինը, ընդ որում.

| **Չափա-բաժինների համարները** | **Ապրանքի անվանումը** | **Ընդհանուր գինը ՀՀ դրամով /տառերով և թվերով/** |
|---|---|---|
| *1* | *2* | *5=3+4* |
| **1** | **Լիզինգով Խոնավացուցչի ձեռքբերում՝ իր պարագաներով** | **13 857 750** տասներեք միլիոն ութ հարյուր հիսունյոթ հազար յոթ հարյուր հիսուն |
| | Լիզինգի առարկայի գինը | 11270000 տասնմեկ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար |
| | Լիզինգի սպասարկման գինը | 2498225 երկու միլիոն չորս հարյուր իննսունութ հազար երկու հարյուր քսանհինգ |
| | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 84525 ութսունչորս հազար հինգ հարյուր քսանհինգ |
| | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5000 Հինգ հազար |
| **2** | Լիզինգով Անզգայացման սարքի ձեռքբերում՝ իր պարագաներով | **35 392 814** երեսունհինգ միլիոն երեք հարյուր իննսուներկու հազար ութ հարյուր տասնչորս |
| | Լիզինգի առարկայի գինը | 28790000 քսանութ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար |
| | Լիզինգի սպասարկման գինը | 6381889 վեց միլիոն երեք հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր ութսունինը |
| | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 215925 երկու հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր քսանհինգ |
| | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5000 Հինգ հազար |
| **3** | Լիզինգով Թոքերի արհեստական շնչառության սարքավորման ձեռքբերում՝ | **45 115 552** քառասունհինգ միլիոն հարյուր տասնհինգ |

| | | |
|---|---|---|
| | իր պարագաներով | հազար հինգ հարյուր հիսուներկու |
| | Լիզինգի առարկայի գինը | 36700000<br>երեսունվեց միլիոն յոթ հարյուր հազար |
| | Լիզինգի սպասարկման գինը | 8135302<br>ութ միլիոն հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր երկու |
| | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 275250<br>երկու հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր հիսուն |
| | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5000<br>Հինգ հազար |

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և **Վաճառողն** իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ **Լիզինգառուն** կամ **Գնորդ-Լիզինգատուն** նվազեցնելու այդ գինը:

3.2 **Գնորդ-լիզինգատուն** մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները **Վաճառողի** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է **Լիզինգառուի և Վաճառողի** միջև կնքված հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով, **Վաճառողի** կողմից ներկայացված հարկային հաշվի հիման վրա:

3.3 **Լիզինգառուն** իրեն հանձնված ապրանքի ժամանակավոր օգտագործման և տիրապետման դիմաց **Գնորդ-Լիզինգատուին** վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները **Գնորդ-Լիզինգատուի** բանկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն **Լիզինգի պայմանգրի անբաժանելի մաս հանդիսացող վճարման ժամանակացույցի:**

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 **Վաճառողը** երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում **Լիզինգառուի** կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա **Վաճառողը** պարտավոր է իր հաշվին, **Լիզինգառուի** կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է **Լիզինգառուի** և **Վաճառողի** միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը **Լիզինգառուի**ն հանձնելու փաստը ֆիքսվում է **Լիզինգառուի** և **Վաճառողի** միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ապրանքի հանձնման-ընդունման արձանագրության կնքման պահից ապրանքը համարվում է **Գնորդ-Լիզինգատու**ի կողմից **Լիզինգառուի** ժամանակավոր օգտագործմանը և տիրապետմանը հանձնված:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ **Վաճառողը Լիզինգառուի**ն է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը **Լիզինգառուի**ն հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում **Վաճառողը** հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, **Լիզինգառուն** պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով **Վաճառողին** է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա **Լիզինգառուն** չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով **Վաճառողին** հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում **Լիզինգառուն** ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և **Վաճառողի** նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում **Լիզինգառուն** չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը **Լիզինգառուն** էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով **Վաճառողին** է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 **Վաճառողը** պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 **Վաճառողի** կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում **Վաճառողից** յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում **Վաճառողից** գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են **Վաճառողին** վճարման ենթակա գումարների հետ:

6.5 **Գնորդ-լիզինգատուի** կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Վաճառողի գրավոր պահանջով **Գնորդ-լիզինգատուն** պարտավորվում է յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար **Վաճառողին** վճարել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Սույն գլխի դրույթները կիրառման ենթակա չեն **Լիզինգառուի** և Լիզինգատուի միջև Լիզինգի պայմանագրով սահմանված պայմանագրային իրավահարաբերությունների նկատմամբ:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագիրը կնքվելու հետ միաժամանակ կամ դրա կնքումից հետո **Գնորդ-Լիզինգատուի և Լիզինգառուի** միջև կնքվում է՝ Լիզինգի պայմանագիր, որով կարգավորվում են ապրանքը լիզինգի իրավունքով տրամադրելու բոլոր պայմանները:

---

[21] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, **Վաճառողը** ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո **Գնորդ-Լիզինգատուն** և **Լիզինգառուն** համատեղ որոշմամբ կարող են միակողմանիորեն լուծել պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, **Գնորդ-Լիզինգատուն** և **Լիզինգառուն** չեն կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով **Վաճառողի** համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով **Գնորդ-Լիզինգատուի** և **Լիզինգառուի** կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ **Վաճառողի** առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ **Լիզինգառուի** մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ **Վաճառողի** առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում **Վաճառողի** կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է **Վաճառողը**:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 **Վաճառողի** կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը **Լիզինգառուն** հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: **Վաճառողը**, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԼԻԶԻՆԳԱՌՈՒ | ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|---|
| <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արմենակյան 108/4<br>ՀՎՀՀ 01508793<br><<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1150001612200100<br>Միքայել Ադամյան<br><br>/ստորագրություն/<br>Կ.Տ | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>ք. Երևան, Նալբանդյան փողոց, 48<br>ՀՎՀՀ 01500362<br>Թ/հ 103002101154<br>ՀՀ կենտրոնական բանկ<br>Կորպորատիվ Բիզնեսի տնօրեն՝<br>Արման Պետրոսյան<br><br>/ստորագրություն/<br>Կ.Տ | <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արզումանյան 32/10<br>ՀՎՀՀ 01210095<br>2481001168180025<br><<Արդշինբանկ>> ՓԲԸ<br>lawyer@c-e.am<br>011-87-87-17<br>Լիազորված անձ՝<br>Արմինե Բատիկյան<br><br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Հավելված N 1*
*« 02 » դեկտեմբերի 2025 թ. կնքված*
**ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-2** *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

*ՀՀ դրամ*

| հհ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման առարկայի անվանումը | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 1 | **33151290** | **Լիզինգով Խոնավացուցչի ձեռքբերում՝ իր պարագաներով** | ք.Երևան, Ա. Արմենակյան 108/4 | 2 հավաքածու | **Սույն գնման պայմանագրի և լիզինգի պայմանագրի կնքման օրվանից հաշված 90 օրվա ընթացքում:** |
| | | Լիզինգի առարկայի գինը | 11270000<br>տասնմեկ միլիոն երկու հարյուր յոթանասուն հազար | | |
| | | Լիզինգի սպասարկման գինը | 2498225<br>հարյուր իննսունինութ հազար երկու հարյուր քսանհինգ | | |
| | | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 84525<br>երկու միլիոն չորս ութսունչորս հազար հինգ հարյուր քսանհինգ | | |
| | | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5000<br>Հինգ հազար | | |
| **2** | **33171700** | **Լիզինգով Անզգայացման սարքի ձեռքբերում՝ իր պարագաներով** | ք.Երևան, Ա. Արմենակյան 108/4 | 2 հավաքածու | **Սույն գնման պայմանագրի և լիզինգի պայմանագրի կնքման օրվանից հաշված 90 օրվա ընթացքում:** |
| | | Լիզինգի առարկայի գինը | 28790000<br>քսանութ միլիոն յոթ հարյուր իննսուն հազար | | |
| | | Լիզինգի սպասարկման գինը | 6381889<br>վեց միլիոն երեք հարյուր ութսունմեկ հազար ութ հարյուր ութսունինը | | |
| | | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 215925<br>երկու հարյուր տասնհինգ հազար ինը հարյուր քսանհինգ | | |
| | | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5000<br>Հինգ հազար | | |
| **3** | **33151250** | **Լիզինգով Թոքերի արհեստական շնչառության սարքավորման ձեռքբերում՝ իր պարագաներով** | ք.Երևան, Ա. Արմենակյան 108/4 | 2 հավաքածու | **Սույն գնման պայմանագրի և լիզինգի պայմանագրի կնքման օրվանից հաշված 90 օրվա ընթացքում:** |
| | | Լիզինգի առարկայի գինը | 36700000<br>երեսունվեց միլիոն յոթ հարյուր հազար | | |
| | | Լիզինգի սպասարկման գինը | 8135302<br>ութ միլիոն հարյուր երեսունհինգ հազար երեք հարյուր երկու | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | ապահովագրության գինը | երկու հարյուր յոթանասունհինգ հազար երկու հարյուր հիսուն |
| | | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5000<br>Հինգ հազար |

Չափաբաժին 1

| հ/հ | Չափաբաժնի անվանումը | Առաջարկվող ապրանքի |
|---|---|---|
| | | Լիզինգի առակայի Ապրանքային նշանը, մոդելը և արտադրողը |
| 1 | Լիզինգով Խոնավացուցչի ձեռքբերում՝ իր պարագաներով | Airvo2, Fisher & Paykel |

**Լիզինգի առակայի և լիզինգի սպասարկման տեխնիկական բնութագրերը***

Խոնավացուցիչը ունի ներկառուցված գեներատոր, որը ապահովում է բարձր հոսքով(HighFlow) տաք և խոնավ օդի հոսք սպոնտան շնչառություն ունեցող պացիենտներին: Հոսքի արագությունը 2-60 լ/րոպե կախված ինտերֆեյսից: Ներշնչված խառնուրդում թթվածնի կոնցենտրացիան՝ 21-95%: Ջերմաստիճանի կարգավորումները ՝ 37, 34 և 31 աստիճաններ: Ազդանշանները հետևյալ դեպքերում՝ սխալ (Error), շնչառական կոնտուրի խնդիր, արտահոսք, խցանում, շատ ցածր O2 , շատ բարձր O2, օդի հոսքի նշված արժեքին չհասնելու դեպքում, ջրի պակասի, չի հասնում նշված ջերմաստիճանին: Սարքի չափերը ՝ 295մմx170մմx175մմ:

Հավաքածուն պետք է ներառի ՝ Խոնավացուցիչը 1 հատ, խոնավացուցիչը ամրացնելու հարմարանքներով կանգնակ 1 հատ, շնչառական կոնտուր 30 հատ, ֆիլտրերի հավաքածու 1 հատ, քթային կանյուլաներ 10-ական թերհաս և նորածնային, ախտահանման և մաքրման հավաքածու 1 հատ, կանյուլա նորածնային 10 հատ, մանկական կանյուլաXS,S,M չափերի 10 ական:

Հավաքածուն համարվում է մեկ միավոր:

Տրամադրվում է 1 տարվա երաշխիքային ժամկետ, սկսած տեղադրման պահից:

Սարքի տեղադրումը, թողարկումը կիրականացվի մատակարարի միջոցներով:

**<u>Լիզինգի պայմանները՝</u>**

- Առանց Կանխավճար՝ 0%,
- Մարման ժամկետ՝ մինչև 36 ամիս,
- Լիզինգի առարկայի ապահովագրություն լիզինգի ամբողջ ժամանակահատվածում, ոչ ավել քան 0,25%, որը հաշվարկվում է տարեկան, մնացորդային գումարի նկատմամբ,
- Տարեկան անվանական տոկոսադրույք՝ ոչ ավել քան 13.5% ՀՀ դրամով և ոչ ավել քան 8% արտարժույթով ֆինանսավորելու դեպքում,
- Լիզինգի տրամադրման միջնորդավճարներ և սպասարկման վճարներ չկան,(առանց միջնորդավճար),
- Մարումներ՝ աննուիտետային, ամսական,
- Լիզինգառուին իրավունք է վերապահվում վաղաժամկետ կատարել վճարումները, որով պայմանավորված վերահաշվարկ է կատարվում վճարման ժամանակացույցում,
- Լիզինգի ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը՝ եթե Լիզինգառուն վաղաժամկետ կատարել է բոլոր վճարումները, Լիզինգի առարկան անցնում է Լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից լիզինգի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարելու և սեփականության իրավունքի փոխանցման գործարքի վճարը վճարելու պայմանով, որի չափը կազմում է 5000 ՀՀ դրամ:

- Լիզինգի տրամադրումը կիրականացվի ՀՀ կառավարության 26.03.2020թ թիվ 355-Լ որոշման շրջանակներում, և լիզինգի տոկոսադրույքի 10% կսուբսիդավորվի՝ նշված ծրագրի պայմաններին համապատասխանելու պարագայում:

:

Չափաբաժին 2

| հ/հ | Չափաբաժնի անվանումը | Առաջարկվող ապրանքի |
|---|---|---|
| | | Լիզինգի առակայի Ապրանքային նշանը, մոդելը և արտադրողը |
| 2 | Լիզինգով Անզգայացման սարքի ձեռքբերում՝ իր պարագաներով | Leon Plus, Lowenstein Medical |

**Լիզինգի առակայի և լիզինգի սպասարկման տեխնիկական բնութագրերը***

Անզգայացման սարք՝ նախատեսված մեծահասակների և նորածինների համար, միկրոպրոցեսորային կառավարմամբ, պննմատիկ ինհալացիոն համակարգով, որը համալրված է արտաշնչման և ներշնչման հոսքի տվիչով: Ներկառուցված վակուումի համարգ: Էլեկտրոնային PEEP կարգաբերումով: Համակարգի ինքնաստուգման թեստը 4 րոպե: Սարքը օժտված է արտահոսքի սենսորով, անզգայացնող գազի տիպի ավտոմատ իդենտիֆիկացիայով, պարամագնետիկ թթվածնի տվիչով, ներկառուցված դարակներով: Գոլորշացուցիչները փոփոխական շրջանցիկ, ամբողջությամբ փոխհատուցվող մեթոդով: Շնչառության ծավալը 3 -1,600 մլ միջակայքում, ներշնչման դադարը 0-90% միջակայքում, շնչառության հաճախականությունը 4-80 շնչ/րոպե միջակայքում, ներշնչման հոսքը 180 լ/ր, պասիվ անզգայացնող գազի հեռացում, CO2-ի կոնցենտրացիայի արտացոլում ներկառուցված մոնիտորին, արտաշնչման ծավալի հաշվարկում էլեկտրոնային անեմոմետրիկ մեթոդով, թթվածնի տվիչի արժազանքը 0,45վ., աշխատանքը ներկառուցված մարտկոցներից 100ր., դիտարկման հնարավորությունները՝ թայմերի առկայություն բոլոր ռեժիմներում, ներկառուցված 15 դյույմանոց մոնիտոր: Կորերի արտացոլման հնարավորության առկայություն՝ ճնշում, հոսք, ծավալ, CO2, Հալոտան, Իզոֆլուրան, Էնֆլուրան, սևոֆլուրան, դեսֆլուրան, թթվածին: Գրաֆիկական և թվային տրենդներիառկայություն - Ppeak, Pmean, PEEP, MV, CO2 insp. / exp., O2 insp. / exp., ազդող նյութի, դիմադրություն, ստատիկ/դինամիկ համապատասխանություն: Տագնապների պահպանում և արտահանում: Սարքը հնարավորություն ունի հետևյալ ցուցմունքների արտացոլման՝ ստատիկ/դինամիկ համապատասխանություն, CO2/C, Ppeak, Pplateau, Pmean, PEEP, MV, MV calculated, MV spontaneous%, VTi, Vte, Leak%, Frequencytotal, spontaneous, Frequency CO2, Tispontaneous, Tinspiratoric, Texpiratoric, I : E, CO2, O2, Agent:

Հավաքածուն իր մեջ ներառում է անզգայացման սարքը, գոլորշացուցիչներ 2 հատ՝ իզոֆլյուրան և սևոֆլյուրան, «Freshgas» պորտ, ջրի մեկուսիչ նորածնային 10 հատ, ջրի մեկուսիչ մեծահասակների 10 հատ, գազի չափման խողովակ 10 հատ

Սարքավորումը ունի՝ ISO13485 որակի հավաստագիր, ինչպես նաև CE Mark (Directive 93/42/EEC):

Սարքավորումը եվրոպական արտադրության:

1 տարվա երաշխիքային ժամկետ, սկսած տեղադրման պահից:

Սարքի տեղադրումը, թողարկումը, ԲԿ-ի տեխնիկական մասնագետի ուսուցումը կիրականացվի արտադրողի կողմից արտոնագրված մասնեգետի կողմից մատակարարի միջոցներով:

**<u>Լիզինգի պայմանները՝</u>**

- Առանց Կանխավճար՝ 0%,
- Մարման ժամկետ՝ մինչև 36 ամիս,
- Լիզինգի առարկայի ապահովագրություն լիզինգի ամբողջ ժամանակահատվածում, ոչ ավել քան 0,25%, որը հաշվարկվում է տարեկան, մնացորդային գումարի նկատմամբ,
- Տարեկան անվանական տոկոսադրույք՝ ոչ ավել քան 13.5% ՀՀ դրամով և ոչ ավել քան 8% արտարժույթով ֆինանսավորելու դեպքում,
- Լիզինգի տրամադրման միջնորդավճարներ և սպասարկման վճարներ չկան,(առանց միջնորդավճար),
- Մարումներ՝ աննուիտետային, ամսական,
- Լիզինգառուին իրավունք է վերապահվում վաղաժամկետ կատարել վճարումները, որով պայմանավորված վերահաշվարկ է կատարվում վճարման ժամանակացույցում,

- Լիզինգի ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը՝ եթե Լիզինգառուն վաղաժամկետ կատարել է բոլոր վճարումները, Լիզինգի առարկան անցնում է Լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից լիզինգի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարելու և սեփականության իրավունքի փոխանցման գործարքի վճարը վճարելու պայմանով, որի չափը կազմում է 5000 ՀՀ դրամ:
- Լիզինգի տրամադրումը կիրականացվի ՀՀ կառավարության 26.03.2020թ թիվ 355-Լ որոշման շրջանակներում, և լիզինգի տոկոսադրույքի 10% կուբսիդավորվի՝ նշված ծրագրի պայմաններին համապատասխանելու պարագայում:

Չափաբաժին 3

| h/h | Չափաբաժնի անվանումը | Առաջարկվող ապրանքի |
|---|---|---|
| | | Լիզինգի առակայի Ապրանքային նշանը, մոդելը և արտադրողը |
| 3 | Լիզինգով Թոքերի արհեստական շնչառության սարքավորման ձեռքբերում՝ իր պարագաներով | HAMILTON-C3, Hamilton Medical |

Թոքերի արհեստական շնչառության սարքավորում կապնոգրաֆիայով, որը պետք է նախատեսված լինի մեծահասակների և նորածինների թոքերի ինվազիվ և ոչ ինվազիվ արհեստական օդափոխության համար: Սարքը 12" անկյունագծով գունավոր սենսորային դիսփլեյը ապահովում է 8 շնչառական կորերի և բոլոր չափվող պարամետրերի ներկայացումը:Կորերի պահպանումը (տրենդ) 72ժ : Սարքի քաշը 9,5 Կգ: Սարքը ունի ներկառուցված օդամղիչ /տուրբինա/ շնչառական բոլոր աշխատանքային ռեժիմների հուսալի օգտագործման համար: Ունի ներկառուցված պնևմատիկ ներռւլայզեր: Թթվածնի խթարարից և ցածր ճնշման թթվածնի աղբյուրից աշխատելու հնարավորություն: Ավտոկլավով մանրեազերծվող հոսքի տվիչ, պրոքսիմալ տեղակայումով: Ոչ ինվազիվ օդափոխության ընթացքում ավտոմատ արտահոսքի կոմպենսացում և համապատասխան տագնապային ազդանշան: Օդամղիչի /տուրբինի/ աշխատանքային ռեսուրսը 8 տարի առանց աշխատաժամերի սահմանափակման: Ներկառուցված վերալիցքավորվող մարտկոցը ապահովում է ավտոնոմ աշխատանք 3 ժամ, մարտկոցների փոխարինումը պետք է հնարավոր լինի իրականացնել սարքի աշխատանքի (բուժառուի թոքերի արհեստական շնչառության) ընթացքում, առանց խոչնդոտելու այդ պրոցեսին, առանց սարքի դիրքային փոփոխությունների՝ սարքը շահագործողի(օպերատորի) կողմից: Առավելագույն /անընդհատ/ հոսքը 240 լ/ր: Պացիենտի նշվող քաշը սկսած 200 գրամից: Շնչառական ծավալը 2մլ. – 2000մլ.:Ներշնչման ճնշումը կարգավորելի է 3-ից 60 սմH2O PEEP/CPAP-ի նկատմամբ: Շնչառության հաճախականությունը մինչև 80 շ/ր: PEEP/CPAP կարգավորելի 0-ից 35 սմH2O: Ճնշման տրիգերը կարգավորելի -0,5-ից -15 սմH2O: Հոսքի տրիգերի զգայունությունը կարգավորելի է առնվազն 1-20 լ/ր.: Սարքը ունի IP21 պաշտպանվածություն:

**Հետևյալ ադապտատիվ ռեժիմների առկայություն՝**

- Նշված շնչառական ծավալի մատակարարում, շնչառական ուղիներում նվազագույն ճնշման պահպանմամբ
- Շնչուղիներում ավտոմատ կերպով վերահսկվող կամ օժանդակ ճնշման անընդմեջ կարգավորում, հիմնված նշված րոպեական օդափոխության ծավալի՝ հաշվի առնելով թոքային մեխանիկայի և հիվանդի սպոնտան շնչառության տվյալները:
- Էնդոտրախեալ խողովակի դիմադրության ավտոմատ կոմպենսացիա
- Ճնշմամբ համամասնական աջակցություն
- Սպոնտան շնչառության ռեժիմում նշված ծավալի ավտոմատ ապահովում ճնշման աջակցությամբ:

**Հետևյալ ռեժիմների առկայություն՝**

- Ծավալով կարգավորվող օդափոխություն
- Ծավալով կարգավորվող սինխրոնիզացված և ընդհատվող օդափոխություն
- Ճնշումով կարգավորվող օդափոխություն
- Ադապտատիվ (ծավալային թիրախով) ճնշումովկարգավորվող օդափոխություն
- Երկմակարդակ օդափոխություն
- Ճնշումով կարգավորվող սինխրոնիզացված և ընդհատվող օդափոխություն
- Շնչուղիներում ճնշման ազատման օդափոխություն
- Երկուղի պահպանման ռեժիմով ճնշման աջակցությամբ օդափոխություն
- Ոչ ինվազին օդափոխություն (Ճնշման աջակցությամբ) հավելյալ պահպանման ռեժիմով
- Ոչ ինվազին օդափոխություն (Ճնշման աջակցությամբ) ցիկլային շնչառության ռեժիմով
- Բարձ հոսքով թթվածնային թերապիա 2-80 լ/ր

**Հավելյալ հնարավորություններ՝**

- Արտաշնչման դադար
- Արտաշնչման վերջում թոքերում ճնշումը չափելու հնարավորություն
- CO2 չափում կենտրոնական հոսքի տարբերակով, առնվազն հետևյալ պարամետրերի արտացոլմամբ՝ ներշնչվող CO2-ի ծավալի մլ, արտաշնչվող CO2-ի ծավալ մլ, ալվեոլար մակընթացային օդափոխություն մլ,

մնած տարածության ծավալի մասնաբաժինը շնչուղիների բացվածքում %, մնռած տարածության ծավալը մլ շնչուղիներում, CO2-ի հեռացումը մլ/ր, ալվեոլար րոպեական օդափոխություն մլ/ր, ալվեոլար պլատոի մասնաբաժինը %CO2/լ, փրակցիոն վերջ-մակընթացային CO2 կոնցենտրացիաի %, վերջ-մակընթացային CO2 ճնշման մմ.սս:

***Հավաքածուն իր մեջ ներառում է՝***

1. Արհեստական շնչառության սարքը տեղակայված համապատասխան շարժական սայլակի վրա:
2. Շնչառական կոնտուրի հենարան / բռնակ
3. Խոնիավացուցիչ, սարքին միացող ամրակով
4. Կապնոգրաֆիայի համար անհրաժեշտ բազմակի օգտագործման CO2 փոխակերպիչ (adapter)՝ մեծահասակների 2 հատ, միանվագ օգտագործման նորածնային 10 հատ:
5. Անհրաժեշտ աքսեսուարները ըստ մատակարարվող սարքի յուրահատկությունների՝ առնվազն արտաշնչման փական 2 հատ բազմակի օգտագործման, հոսքի տվիչ բազմակի օգտագործման 2 հատ, նորածնային շնչառական կոնտուր միանգամյա օգտագործման 15 հատ, խոնավացուցիչի խցիկ 10 հատ, մեծահասակների շնչառական կոնտուր խոնավացուցիչի խցիկով միանգամյա օգտագործման 5 հատ:

Սարքավորումը եվրոպական արտադրության:
1 տարվա երաշխիքային ժամկետ, սկսած տեղադրման պահից:
Սարքի տեղադրումը, թողարկումը, ԲԿ-ի տեխնիկական մասնագետի ուսուցումը կիրականացվի արտադրողի կողմից արտոնագրված մասնեգետի կողմից մատակարարի միջոցներով:

**<u>Լիզինգի պայմանները՝</u>**

- Առանց Կանխավճար՝ 0%,
- Մարման ժամկետ՝ մինչև 36 ամիս,
- Լիզինգի առարկայի ապահովագրություն լիզինգի ամբողջ ժամանակահատվածում, ոչ ավել քան 0,25%, որը հաշվարկվում է տարեկան, մնացորդային գումարի նկատմամբ,
- Տարեկան անվանական տոկոսադրույք՝ ոչ ավել քան 13.5% ՀՀ դրամով և ոչ ավել քան 8% արտարժույթով ֆինանսավորելու դեպքում,
- Լիզինգի տրամադրման միջնորդավճարներ և սպասարկման վճարներ չկան,(առանց միջնորդավճար),
- Մարումներ՝ աննուիտետային, ամսական,
- Լիզինգառուին իրավունք է վերապահվում վաղաժամկետ կատարել վճարումները, որով պայմանավորված վերահաշվարկ է կատարվում վճարման ժամանակացույցում,
- Լիզինգի ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը՝ եթե Լիզինգառուն վաղաժամկետ կատարել է բոլոր վճարումները, Լիզինգի առարկան անցնում է Լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից լիզինգի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարելու և սեփականության իրավունքի փոխանցման գործարքի վճարը վճարելու պայմանով, որի չափը կազմում է 5000 ՀՀ դրամ:
- Լիզինգի տրամադրումը կիրականացվի ՀՀ կառավարության 26.03.2020թ թիվ 355-Լ որոշման շրջանակներում, և լիզինգի տոկոսադրույքի 10% կսուբսիդավորվի՝ նշված ծրագրի պայմաններին համապատասխանելու պարագայում:

| ԼԻԶԻՆԳԱՌՈՒ | ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|---|
| <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արմենակյան 108/4<br>ՀՎՀՀ 01508793<br><<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1150001612200100<br>Միքայել Արամյան<br><br>-----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>ք. Երևան, Նալբանդյան փողոց, 48<br>ՀՎՀՀ 01500362<br>Թ/հ 103002101154<br>ՀՀ կենտրոնական բանկ<br>Կորպորատիվ Բիզնեսի տնօրեն<br>Արման Պետրոսյան<br><br>-----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արզումանյան 32/10<br>ՀՎՀՀ 01210095<br>2481001168180025<br><<Արդշինբանկ>> ՓԲԸ<br>lawyer@c-e.am<br>011-87-87-17<br>Լիազորված անձ՝<br>Արմինե Բատիկյան<br><br>-----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Հավելված N 2*
*« 02» դեկտեմբերի 2025 թ. կնքված*
**ՆՄԲԿ-ԲՄՀԱՊՁԲ-25/92-2** *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հհ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման առարկայի անվանումը | Լիզինգի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել. |
|---|---|---|---|
| 1 | 33151290 | Լիզինգով Խոնավացուցչի ձեռքբերում՝ իր պարագաներով | ֆինանսական միջոցների վճարումները կատարվելու են Լիզինգի պայմանագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ հաշվի առնելով լիզինգի պայմանները: |
| 2 | 33171700 | Լիզինգով Անզգայացման սարքի ձեռքբերում՝ իր պարագաներով | ֆինանսական միջոցների վճարումները կատարվելու են Լիզինգի պայմանագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ հաշվի առնելով լիզինգի պայմանները: |
| 3 | 33151250 | Լիզինգով Թոքերի արհեստական շնչառության սարքավորման ձեռքբերում՝ իր պարագաներով | ֆինանսական միջոցների վճարումները կատարվելու են Լիզինգի պայմանագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ հաշվի առնելով լիզինգի պայմանները: |

| ԼԻԶԻՆԳԱՌՈՒ | ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|---|
| <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արմենակյան 108/4<br>ՀՎՀՀ 01508793<br><<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1150001612200100<br>Միքայել Ադամյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | «ԱՄԻՕ ԲԱՆԿ» ՓԲԸ<br>ք. Երևան, Նալբանդյան փողոց, 48<br>ՀՎՀՀ 01500362<br>Թ/h 103002101154<br>ՀՀ կենտրոնական բանկ<br>Կորպորատիվ Բիզնեսի տնօրեն<br>Արման Պետրոսյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. | <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արզումանյան 32/10<br>ՀՎՀՀ 01210095<br>2481001168180025<br><<Արդշինբանկ>> ՓԲԸ<br>lawyer@c-e.am<br>011-87-87-17<br>Լիազորված անձ՝<br>Արմինե Բատիկյան<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Հավելված N 3*
*« 02» դեկտեմբերի 2025 թ. կնքված*
**ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-2** *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ ______________________
հվհհ ______________________

Լիզինգառու
______________________
______________________
գտնվելու վայրը ______________
հհ______________________
հվհհ______________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«  » «        » 20  թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » «        » 20  թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն

Ապրանքը ընդունեց
______________________
ստորագրություն
______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված N 3.1*
*« 02»* դեկտեմբերի *2025 թ. կնքված*
**ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-2** *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N ______
պայմանագրի արդյունքը Լիզինգառուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Լիզինգառու) և ________________ __________
Գնորդի անվանումը **Վաճառողի** անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում **Վաճառողը** 20 թ. _________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն
______________________
Ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն
______________________
ստորագրություն